ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1960 Общественные науки

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

Հ. Գ. ԻՇԽԻԿՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ—ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Վ. Ի. Լենինը իր ամբողջ գործունեության ընթացքում զբաղվել է ազգային և գաղութային հարցերով, ամենայն ուշադրությամբ հետևելով Արևելքում ծավալվող շարժումներին։

Ռուսական առաջին ռևոլյուցիան, ինչպես նշել է Լենինը, արթնացրեց Ասիային իր խոր, դարավոր քնից։ Իմպերիալիստական երկրների շահագործման ու կեղեքման առարկա դարձած, հարյուրավոր տարիներ նվաստացած, «քաղաքակրթված» Եվրոպայի և Ամերիկայի կողմից ստրկացված գաղութային ժողովուրդները XX դարի սկզբին բարձրացան իրենց ամբողջ հասակով։ Սկսվեց ռևոլյուցիոն և ազգային ազատագրական շարժումների մի պատմական ժամանակաշրջան։ Ռուսաստանի աշխատավորության օրինակով պայքարի ելան Իրանի, Թուրքիայի, Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկրների աշխատավորները։

Այնուհետև ռևոլյուցիոն բռնկումների այդ առաջին շրջանին հաջորդեց համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որը սկիզբ դրեց պատմական նոր դարաշրջանի։

Ահա այս բոլորը ի մի բերելով, Վ. Ի. Լենինը հիշյալ էպոխան կոչել է վիթխարի փլուզումների դարաշրջան և համարելով այն «միայն սկիզբը», նախատեսել է ավելի խոշոր և արմատական փոփոխություններ մարդկության պատմության մեջ։ Մասսայական շարժումների այս բուռն զարգացման պրոցեսում, Լենինի կարծիքով, մեծագույն նշանակություն ունի Արևելքը, որի ժողովուրդների հանդեպ տարվող ճիշտ քաղաքականությունը նա համարում էր հուժ կարևոր քաղաքական հարց։

1921 թվականի նոյեմբերին գրած իր նամակներից մեկում, քննադատելով Թուրքեստանում թույլ տված սխալները, Վ. Ի. Լենինը գրում է. «Մեր ամբողջ Weltpolitik-*ի* համար չափազանց կարևոր է նվաճել տեղացիների վստահությունը։ Եռակի ու քառակի անգամ նվաճել, ապացուցել, որ մենք իմպերիալիստներ չենք, որ թեթում դեպի այդ կողմը մենք չենք հանդուրժի։*

Դա համաշխարհային հարց է, առանց չափազանցության համաշխարհային։

Այստեղ պետք է լինել չափազանց խիստ։ Այդ բանը կանդրադառնա Հնդկաստանի վրա, Արևելքի վրա. այստեղ կատակել չի կարելի, այստեղ պետք է լինել 1000 անգամ զգույշ»[1]։

---

* *Միջազգային քաղաքականություն։*

[1] Ленинский сборник, XXXVI, Госполитиздат, 1959, стр. 320—321.

Նման վերաբերմունք և անհրաժեշտ զգուշություն ազգային, գաղութային հարցում Լենինը ցուցաբերում էր միշտ և նույնը պահանջում էր ուրիշներից։

* * *

Վ. Ի. Լենինի այդպիսի բացառիկ ուշադրությունը դեպի Արևելքի երկրները և նրանց ժողովուրդների պայքարը, բացատրվում է այն չափազանց կարևոր դերով, որ նրանք խաղացել և խաղում են բանվոր դասակարգի ղեկավարությամբ իմպերիալիզմի կործանման համար մղվող պայքարում։

Իրենց ազատագրման անհրաժեշտությունը հասկացած և պայքարի ելած գաղութային ժողովուրդները մեծ ուժ են ներկայացնում նախ՝ քանակով։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ վերջին հաշվով գաղութների և կիսագաղութների ազգաբնակչությունը կազմում է երկրագնդի ազգաբնակչության մեծագույն մասը։ Նրա արթնացումը, քաղաքական ակտիվության ուժեղացումը, միջազգային կյանքում նրա կշռի բարձրացումը համաշխարհային կարևոր գործոն է դարձել իմպերիալիզմի դարաշրջանում։

Ելնելով այս բոլորից, Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսաստանյան 2-րդ համագումարում 1918 թ. նոյեմբերի 22-ին արած իր զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը ընթացիկ մոմենտի ամենակարևոր հարցը համարում է «Արևելքի ժողովուրդների վերաբերմունքը դեպի իմպերիալիզմը և ռևոլյուցիոն շարժումը այդ ժողովուրդների մեջ»[2]։

Այսպիսով, այդ հարցը որպես միջազգային քաղաքականության հիմնական հարցերից մեկը, մշտապես եղել է Վ. Ի. Լենինի և Կոմունիստական պարտիայի ուշադրության կենտրոնում։

Վ. Ի. Լենինին Արևելքի ժողովուրդների վիճակը հետաքրքրել է նաև այն պատճառով, որ նրանք՝ անցյալում մարդկային քաղաքակրթությանը իրենց մատուցած պատմական ծառայություններով հայտնի ժողովուրդները, կարևոր դեր ունեն կատարելու համայն մարդկության ապագայի բախտորոշ գործերում։

Հիշյալ զեկուցման մեջ նշելով այս հանգամանքը, Լենինը ասում է.

«Արևելքի արթնացման շրջանից հետո արդի ռևոլյուցիայի մեջ մոտենում է այն շրջանը, երբ Արևելքի բոլոր ժողովուրդները կմասնակցեն ամբողջ աշխարհի բախտի լուծմանը, որ միայն հարստացման օբյեկտ չինեն։ Արևելքի ժողովուրդներն արթնանում են այն բանի համար, որպեսզի պրակտիկորեն գործեն և որպեսզի ամեն մի ժողովուրդ վճռի ամբողջ մարդկության բախտի հարցը»[3]։

Դեռևս մինչև համաշխարհային պատերազմը դրած իր մի շարք աշխատություններում Լենինը արձանագրել է ինքնուրույնության տենդենցի ծագումը և աստիճանական ուժեղացումը գաղութներում։ Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի և Արևելքի այլ երկրների ժողովուրդների պայքարը ֆեոդալիզմի և իմպերիալիզմի դեմ այդ տենդենցի լավագույն արտահայտությունն էր հանդիսանում։

Լենինի կարծիքով 1905 թվականի ռուսական ռևոլյուցիային հետևող ժողովրդական շարժումների վերելքի առաջին էտապում արդեն դեմոկրատական ուժերը Արևելքում այնքան էին առաջ տարել ազատագրական շարժումը, որ «աշխարհում ոչ մի ուժ Ասիայում հին ճորտատիրությունը չի վերականգնի,

[2] Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 30, էջ 174։

[3] Նույն տեղում էջ 186—187։

չի ջնջի աշխարհի երեսից ասիական ու կիսաասիական երկրների ժողովրդական մասսաների հերոսական դեմոկրատիզմը»[4]։

Վ. Ի. Լենինի ուշադրությունից չեն վրիպել նույնիսկ ամենախուլ, մակերեսի վրա չերևաջող խլրտումներն անգամ։ Հետադարձ հայացք ձգելով ազատագրական շարժումների անցած ուղու վրա, նա 1922 թվականին նշում է, որ Արևելքի երկրներում ռևոլյուցիան քսան տարվա ընթացքում դարձել է մի անհաղթահարելի ուժ, ներգրավելով մինչև մեկ միլիարդ մարդ, որոնք ապրում են Ասիայում և Աֆրիկայում։ Վերջինիս մասին Լենինը ակնարկում է, որ նա ևս սկսել է շարժվել և ոչ «պալամենտական» միջոցներով հիշեցնել իր հավակնությունը մարդ կոչվելու, այլ ոչ թե ստրուկ[5]։

Այս խոսքերը գրվելուց հետո անցել էր ընդամենը երեք տասնյակ տարի, երբ Աֆրիկան շարժվեց և այնպես, որ որոշ երկրներում գաղութատիրության միայն բեկորները մնացին։

Եվրոպայի առաջավոր պրոլետարիատի պայքարը իշխանության համար և Ասիայի արթնացումը Լենինը համարում է XX դարի այն երկու խոշորագույն երևույթները, որոնք սկիզբ են դնում համաշխարհային պատմության նոր փուլին։

Արևելքի արթնացման, այդ երկրների դեմոկրատական ուժերի ամրապնդման մեջ Վ. Ի. Լենինը տեսնում է չափազանց կարևոր նշանակություն ունեցող մի նոր ուժ, որը իր հերթին ազդեցություն կունենա Եվրոպայի երկրների վրա, այնտեղի ռևոլյուցիոն շարժումների վրա։

«Պորտ-Արտուրի անկումը», «Ասիայի զարթոնքը», «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը», «Հետամնաց Եվրոպան և առաջավոր Ասիան» ու մի շարք այլ աշխատություններում Լենինը ցույց է տալիս, որ իմպերիալիստական, գաղութատիրական Եվրոպան, որտեղ բուրժուազիան հանդես է գալիս արդեն որպես հետադեմ ուժ, շատ հարցերում ավելի հետամնաց ու ռեակցիոն է, քան թե գաղութային Ասիան։

Մինչև այդ արհամարհված, «վայրենի» համարված Արևելքը նոր պայմաններում, իմպերիալիզմի աճող ճգնաժամի պայմաններում իր պատշաճ տեղն է գրավում պատմության մեջ։ Նա Եվրոպային ու Ամերիկային երբեմն ցույց է տալիս դեմոկրատական առաջընթացի ուղին, շատ խնդիրների դեմոկրատական լուծման ձևը, ինչպես օրինակ, ազգային և ռասայական պրոբլեմների լուծման և այլ հարցերում։

Հիմնավորելով այս բոլոր տվյալները, Վ. Ի. Լենինը դեմոկրատիայի ու սոցիալիզմի հաղթանակի բախտը, իրավամբ, կապում է Արևելքի հետ։

«Պայքարի ելքը վերջին հաշվով կախված է նրանից, որ Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և այլն կազմում են բնակչության հսկայական մեծամասնությունը, իսկ բնակչության հենց այդ մեծամասնությունն է, որ վերջին տարիների ընթացքում արտասովոր արագությամբ ներգրավվում է իր ազատագրման պայքարի մեջ, այնպես, որ այդ իմաստով կասկածի նշույլ անգամ չի կարող լինել, թե ինչպիսի վերջնական լուծում կունենա համաշխարհային պայքարը։ Այդ իմաստով սոցիալիզմի վերջնական հաղթանակն ապահովված է միանգամայն և անպայման»[6]։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 739։
[5] Նույն տեղում, հատ. 33, էջ 414։
[6] Նույն տեղում, էջ 597։

Անցած քառասուն տարիների ընթացքում Լենինի այդ կանխատեսումը իրագործվեց։ Առանձնապես ակնառու դարձավ Արևելքի դերը միջազգային հարցերում՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Իրերի իրական վիճակը ՍՄԿՊ 20-րդ համագումարի հաշվետվության մեջ արձանագրված է այսպես.

«Հասել է համաշխարհային պատմության՝ Լենինի կանխագուշակած նոր ժամանակաշրջանը, երբ Արևելքի ժողովուրդները ակտիվ մասնակցություն են ունենում ամբողջ աշխարհի բախտի վճռմանը, դառնում միջազգային հարաբերությունների նոր հզոր գործոնը»[7]։

* *

Ազգային և գաղութային հարցերի մեկնաբանումը Վ. Ի. Լենինը տվել է ելնելով պրոլետարիատի դասակարգային շահերից, տվյալ պատմական ժամանակաշրջանից, իմպերիալիզմի աճող հակասություններից և սոցիալիստական ռևոլյուցիայի զարգացման ժամանակաշրջանի պայմաններից։

Ժամանակակից գաղութային սիստեմը Լենինը համարում է իմպերիալիզմի արգասիք։ «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» և այլ աշխատությունների մեջ նա ցույց է տալիս, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին գաղութները դադարում են լոկ շուկաներ լինելուց և վեր են ածվում կապիտալի ներդրման վայրերի։

Այս պայմաններում իմպերիալիստական պետություններին չի բավարարում գաղութային երկրների ենթարկումը լոկ տնտեսական տեսակետից։ Նրանք ձգտում են այդ երկրները ենթարկել իրենց նաև քաղաքականապես։

«...Ֆինանսական կապիտալին,— գրում է Լենինը,— ամենամեծ «հարմարություններ» և ամենամեծ օգուտներ տալիս է այնպիսի հպատակեցումը, որը զուգորդված է հպատակվող երկրների և ժողովուրդների քաղաքական անկախության կորստի հետ»[8]։

Դարերով կուտակված գաղութային քաղաքականություն վարելու փորձը հարստանում է նոր ավելի նորը, բայց շահագործման ավելի բարձր ձևերով ու միջոցներով։ Հետևանքը եղավ այն, որ Արևելյան երկրների զարգացումը մնաց անասելի ցածր մակարդակի վրա, իսկ գաղութատեր երկրները հնարավորություն ունեցան կուտակել խոշոր հարստություններ, ապահովելով տնտեսության զարգացման բարձր տեմպեր և բարեկեցիկ կյանք իրենց երկրների քաղաքացիների համար։ Հարստահարման այս մեթոդը, այսինքն գաղութային սիստեմի առկայությունը Լենինը համարում է «Կապիտալիզմի անկման արհեստական կասեցման» աղբյուրներից մեկը[9]։

Նման արհեստական, բայց չափազանց ուժեղ պատվարը և իրենց գոյության կարևոր գործոնը պահպանելու համար գաղութարարները օգտագործում են ամեն մի միջոց, ըստ հնարավորին օրինականացնելով դրանք։ Այդ միջոցների մասին Լենինը ասում է. «...Բացի ուղղակի պետական կախումից, գա-

---

[7] Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի 20-րդ համագումարին, Հայպետհրատ, 1955, էջ 29։

[8] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 344։

[9] Նույն տեղում, էջ 401։

զութային կախումը ենթադրում է ֆինանսական և տնտեսական կախման մի ամբողջ շարք հարաբերություններ, ենթադրում է մի ամբողջ շարք պատերազմներ, որոնք պատերազմ չէին համարվում, որովհետև հաճախ հանգում էին սպանդի, երբ եվրոպական և ամերիկյան իմպերիալիստական զորքերը, զինված բնաջնջման ամենակատարելագործված զենքերով, կոտորում էին գաղութային երկրների անզեն ու անպաշտպան բնակիչներին»[10]։

Այդպես էին վարվում անգլիացի գաղութարարները Հնդկաստանում, Աֆրիկայում և այլ գաղութներում։ Օգտվելով այդ «իրավունքից», ռուսական և անգլիական զորքերը խեղդեցին ռևոլյուցիոն շարժումը Իրանում։ Նույնը կատարում էին ֆրանսիացիները Աֆրիկայում և Հնդկաչինում, հոլանդացիները՝ Ինդոնեզիայում ու այսպես տասնյակ տարիներ։

Լենինը նշում է, որ մետրոպոլիաների ներսում կիրառվող դեմոկրատական որոշ տրադիցիաներ, ոչ մի բանով չեն փոխում այդ երկրների գաղութային բաղաքականությունը։ Նա գրում է այն մասին, որ ամերիկյան «դեմոկրատիան», այսինքն դեմոկրատական կապիտալիստները անամոթաբար թալանել ու թալանում են Ֆիլիպինները և Մեքսիկան։ Իսկ Յապոնիան կռվում է Միացյալ Նահանգների հետ, որպեսզի շարունակի թալանել Կորեան, «որին նա կողոպտում է չլսված գազանությամբ, միացնելով տեխնիկայի և զուտ ասիական խոշտանգումների բոլոր նորագույն գյուտերը»[11]։

Հարյուրամյակներ շարունակվող այս խայտառակ ու արյունոտ գաղութային քաղաքականությունը թողել է իր խոր հետքերը այն երկրներում, որոնց մենք անվանում ենք տնտեսապես թույլ զարգացած երկրներ։

Ըստ ամերիկյան մամուլի տվյալների, վերջիններիս մեկ շնչին ընկնում է 10-ից 20 անգամ պակաս գյուղատնտեսական մթերքներ, 11 անգամ պակաս գործվածքեղեն, 16 անգամ պակաս հագուստեղեն և կոշիկ, քան կապիտալիստական երկրներում։

Մեկ շնչին ընկած տարեկան միջին եկամուտը, ըստ ՄԱԿ-ի տվյալների, 1958 թվականին կազմում էր՝

Միացյալ Նահանգներում . . .	1453	դոլլար
Անգլիայում	773	»
Հնդկաստանում	57	»
Ֆիլիպիններում	44	»
Ինդոնեզիայում	29	»
Աֆրիկայի երկրներում	8-ից 16	դոլլար և այլն։

Ամերիկյան «Քիմիկլ Ուիկ» ամսագրի տվյալներով, գաղութների և մետրոպոլիաների միջև եղած այսպիսի տարբերության հետագա զարգացումը կանխելու և ճեղքվածքը փակելու համար անհրաժեշտ է հետամնաց երկրներին հատկացնել տարեկան քառասուն միլիարդ դոլլար։ Առայժմ նրանք ստանում են տարեկան միայն 15 միլիարդ դոլլար։

Կապիտալիզմի զարգացումը Արևելքի երկրներում ուժեղացրեց շահագործումը, սակայն միաժամանակ ստեղծեց և կոփեց նոր երիտասարդ դասակարգերին՝ բուրժուազիային ու պրոլետարիատին, որոնք կանգնեցին ծավալվող ազգային-ազատագրական շարժման գլուխ։ Որոշ երկրներում սկսվեց

[10] Նույն տեղում, հատ. 31, էջ 259։
[11] Նույն տեղում, էջ 558։

ազգերի ձևավորման պրոցեսը, որի հետևանքով շարժման նպատակը դարձավ ավելի որոշակի, անկախության համար պայքարի անհրաժեշտությանն ավելի հասկանալի։

Զևով ազգային այս շարժումները միավորվելով, կազմեցին հակաիմպերիալիստական պայքարի մի հզոր ճակատ։

Իմպերիալիզմի դեմ բարձրացած Եվրոպայի պրոլետարիատի և նրա դաշնակիցները հանդիսացող գաղութային ժողովուրդների պայքարի միջազգային բնույթը, նշում է Լենինը, ունի նաև ազգային նշանակություն ամեն մի երկրի բուրժուազիայի համար, քանի որ նա մահացու կերպով վախենում է դեմոկրատիզմի լայնացումից նախ իր սեփական տանը։ Իսկ կոմունիստները և գիտակից պրոլետարիատը չպետք է նեղացնեն պայքարի ճակատը։ Ազգային շահերը նրանք պետք է տանեն հետին պլանի վրա, առաջնահերթ դարձնելով միջազգային պրոլետարիատի ինտերնացիոնալ շահերը ու դասակարգային պահանջները։ Նրանք պետք է հետևողական պայքար մղեն իրենց իմպերիալիստական բուրժուազիայի դեմ՝ հանուն գաղութային ժողովուրդների ազատագրման։ Ելնելով սրանից, Լենինը կոչ է անում լարել բոլոր ջանքերը, «որպեսզի մերձենանք և միաձուլվենք մոնղոլների, պարսիկների, հնդիկների, եգիպտացիների հետ, մենք մեր պարտքը և մեր շահն ենք համարում անել այդ, որովհետև այլապես սոցիալիզմը Եվրոպայում անկայուն կլինի։ Մենք կաշխատենք դրանով մեզնից ավելի հետամնաց ու ճնշված ժողովուրդներին ցույց տալ «անշահախնդիր կոմունիստական օգնություն», լեհական սոցիալ դեմոկրատների հիանալի արտահայտությամբ, այսինքն նրանց օգնել անցնելու մեքենաներ գործադրելուն, աշխատանքը հեշտացնելուն, անցնելու դեմոկրատիային, սոցիալիզմին»[12]։

Առաջնորդի այս ծրագրային պահանջը ուներ և դեռ կունենա կարևոր նշանակություն իմպերիալիզմի վերջնական ջախջախման համար, կոմունիստական և բանվորական պարտիաների գործունեության համար։ Ռևոլյուցիայի ստրատեգը մշակելով ռևոլյուցիայի հիմնական ուժերի, նրա ավանգարդի՝ պրոլետարիատի և դաշնակիցների՝ գյուղացիության և գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների ճիշտ համագործակցելու պլանը, ցույց է տալիս, որ սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է այդ ուժերի ճիշտ դասավորման և ներդաշնակորեն գործելու դեպքում։

«...Սոցիալիստական ռևոլյուցիան,— ասում էր նա,— միայն և գլխավորապես ռևոլյուցիոն պրոլետարների պայքարը չի լինի ամեն մի երկրում իր բուրժուազիայի դեմ,— ոչ նա իմպերիալիզմի կողմից ճնշված բոլոր գաղութների և երկրների, բոլոր կախյալ երկրների պայքարը կլինի միջազգային իմպերիալիզմի դեմ»[13]։

Վ. Ի. Լենինը ամենամեծ լրջությամբ ու էներգիայով զբաղվել է Արևելքի պրոբլեմներով նաև Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո։ Չնայած իր գերծանրաբեռնվածությանը և առողջական վատ վիճակին՝ Կոմունիստական պարտիայի աշխատանքները ղեկավարելու և երիտասարդ Սովետական Ռեսպուբլիկայի պետական գործերը վարելու հետ միասին, նա մեծ սիրով ու ուշադրությամբ հետևում էր դեպքերի զարգացման

---

[12] Նույն տեղում, հատ. 23, էջ 77։

[13] Նույն տեղում, հատ. 30, էջ 185։

ընթացքին Արևելքում։ Անհրաժեշտության դեպքում անձամբ, եթե այդ հարավոր էր, կամ դրավոր ձևով միջամտում էր, խորհուրդներ և ցուցումներ էր տալիս։ Նա ելույթներ էր ունենում Կոմինտերնի կոնգրեսներում, արևելյան երկրների կոմունիստների կոնֆերենցիաներում, զանազան հավաքներում։ Վերջապես, անձամբ ծանոթ էր Արևելքի շատ գործիչների հետ և միշտ ժամանակ էր գտնում նրանց լսելու, պահանջելով մանրամասը տեղեկություններ իրերի վիճակի մասին Արևելքում։

Նրան հատկապես հետաքրքրում էր, թե ինչ արձագանք է գտնում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը Արևելքի երկրներում։

Ռևոլյուցիայի հաղթանակի անմիջական նախօրեին, 1917 թ. մայիսին, Լենինը համոզված գրում էր. «Ոչ մի կասկածի ենթակա չէ այն, որ պրոլետարիատի հաղթանակը Ռուսաստանում արտակարգ բարենպաստ պայմաններ կտար ռևոլյուցիայի զարգացման համար և Ասիայում և Եվրոպայում»[14]։

Վ. Ի. Լենինը տարբերում էր Հոկտեմբերյան ռևոլյուցիայի միջազգային նշանակության երկու կողմերը. լայն իմաստով, այսինքն ռևոլյուցիայի ազդեցությունը պատմության զարգացման ընթացքի, միջազգային ռևոլյուցիոն շարժումների վրա ընդհանրապես, և նեղ իմաստով՝ երբ անհրաժեշտորեն մեր ռևոլյուցիայի որոշ գծեր, որոշ հիմնական օրինաչափություններ կկրկնվեն մյուս բոլոր երկրներում։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մեծ ազդեցությունը, նրա փորձի ընդօրինակումը դարձավ օրինաչափ երևույթ ազգային-ազատագրական, ռևոլյուցիոն, ժողովրդական բոլոր շարժումների համար։

Սոցիալիստական կարգերի հաղթանակը ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, և մասնավորապես Չինաստանում, Վյետնամում, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկայում, ցույց տվեցին լենինյան դրույթի ճշմարտությունը։

Սակայն ռևոլյուցիայի փորձը և ազգային հարցի լուծումը ՍՍՌՄ-ում ընդօրինակեցին և մի շարք ուրիշ արևելյան երկրներ՝ իրենց ազգային-ազատագրական պայքարի ընթացքում։ Ազգային անկախության և ժողովուրդների ու պետությունների իրավահավասարության պահանջը դարձավ միջազգային քաղաքականության կարևոր գործոններից մեկը։

Նշելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ազդեցությունը Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարի վրա, Ինդոնեզիայի պրեզիդենտ Սուկառնոն գրում է. «Այդ պայքարը դարձավ ավելի կազմակերպված, նրա նպատակը դարձավ ավելի պարզ, անզիջող, այսինքն՝ անկախություն և այն էլ անմիջապես»[15]։

Վ. Ի. Լենինը խոսելով մեր ռևոլյուցիայի միջազգային նշանակության մասին, մտածում էր նաև, որ Սովետների ռեսպուբլիկան պետք է ունենա շափազանց ակտիվ դեր Արևելքի երկրների պայքարում՝ իրենց ազատության և իմպերիալիզմի դեմ մղած պայքարում։

«Այժմ մեր Սովետական ռեսպուբլիկան,— ասում էր նա,— պետք է Արևելքի բոլոր արթնացող ժողովուրդներին իր շուրջը համախմբի, որպեսզի նրանց հետ միասին պայքար մղի միջազգային իմպերիալիզմի դեմ»[16]։

---

[14] Նույն տեղում, հատոր 24, էջ 492—493։

[15] Правда, 11 октября, 1956.

[16] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 188։

Սովետական երկրի օգնությունը, ըստ Լենինի, պետք է ուներ երկու ուղղություն։ Նախ՝ ամեն կերպ պաշտպանել Արևելքի ժողովուրդների շահերը միջազգային բոլոր կազմակերպություններում, կոնգրեսներում, կոնֆերանսներում և այլն։ Մյուս կողմից նրանց օգնություն ցույց տալ տնտեսական, քաղաքական, գիտական, կուլտուրական և այլ-ասպարեզներում։

Այս տեսակետից չափազանց հետաքրքիր են Լենինի նշումները Գ. Վ. Չիչերինի 1922 թվականի մարտին գրած նամակում, որի մեջ վերջինս մի շարք առաջարկություններ է անում Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ։

Խոսելով եվրոպական երկրների Արևելյան ժողովուրդների նկատմամբ վարած քաղաքականության մասին, Չիչերինը քննադատում է այդ քաղաքականությունը և գրում.

«Մեր միջազգային սխեմայի նորությունը պետք է կայանա նրանում, որ նեգրական, ինչպես և մյուս գաղութային ժողովուրդները, մասնակցեն հավասարապես եվրոպական ժողովուրդների հետ միասին կոնֆերանսներում և կոմիսիաներում և իրավունք ունենան չթույլատրել միջամտությունը իրենց ներքին կյանքում»[17]։ 1) ճիշտ է։

Չիչերինի նամակում չափազանց հատկանշական է սպառազինությունների ընդհանուր կրճատման և միջազգային տնտեսության վերականգնման ծրագիրը, որը նա համարում է ընդհանուր և կամավոր գործ։ Լենինը միանգամայն համամիտ է նրա հետ այս հարցերում։ Հետաքրքրական է Լենինի ընդգծած հետևյալ միտքը. «Թույլերին պետք է ցույց տրվի օգնություն»[18]։

Վ. Ի. Լենինի ընդգծումներն ու նշումները ցույց են տալիս նրա վերաբերմունքը այս սկզբունքային, չափազանց կարևոր հարցերում, և ինչպես նա գրում է իր պատասխան նամակում՝ որպես ծրագիր Չիչերինի առաջարկները «շարադրված են շատ լավ», իսկ կետերը (որոնք լուսանցքներում նշել էր ինքը Լենինը) «հիանալի են»[19]։

Այնուհետև, Լենինի գլխավորությամբ և նրանից հետո Կոմունիստական կուսակցության անշեղ քաղաքականության շնորհիվ, Սովետական Միությունը դարձավ Արևելքի ժողովուրդների պաշտպանը և բարեկամը բոլոր միջազգային գործերում։

* *

Սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում, ազգային-ազատագրական շարժումների վերելքը և իմպերիալիզմի հակասությունների հետագա խորացումն ու զարգացումը սրեցին փոխհարաբերությունները գաղութների և կապիտալիստական երկրների միջև։

[17] Ленинский сборник. XXXVI, стр. 451.
[18] Նույն տեղում, էջ 453։
[19] Նույն տեղում, էջ 454—455։

1925—1927 թթ. Չինաստանում ծավալված ռևոլյուցիոն խոշոր շարժումը նոր խթան հանդիսացավ ազգային-ազատագրական պայքարի համար։ Չինաստանի օրինակին հետևեցին Ինդոնեզիայի, Հնդկաչինի, Հնդկաստանի, արաբական մի շարք երկրների ժողովուրդները։

Կրկին անգամ հաստատվեց Վ. Ի. Լենինի այն դրույթը, որ իմպերիալիզմի ժամանակաշրջանը անհրաժեշտորեն պետք է առաջ բերի ու ունի ազգային ճնշման ու բուրժուազիայի դեմ պրոլետարիատի կողմից մղվող պայքարի քաղաքականություն, ուստի և պետք է առաջ բերի «նախ՝ ազգային ռևոլյուցիոն ապստամբությունների ու պատերազմների, երկրորդ՝ պրոլետարիատի կողմից բնողեմ բուրժուազիայի մղվող պատերազմների ու ապստամբությունների, երրորդ՝ ռևոլյուցիոն երկու տեսակի պատերազմների միավորման և այլն, և՝ հնարավորություն և՝ անիրագործելիություն»[20]։

Գաղութային սիստեմի ճգնաժամը, որ սկսվել էր Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո, հետզհետե ավելի խորացավ։ Այն ժամանակ ճգնաժամի էությունը, ինչպես նշել էր Լենինը, կայանում էր Ազգերի լիգայի մանդատային սիստեմի, գաղութային երկրներում ռեֆորմներ անցկացնելու փորձերի և այդ երկրներում (Եգիպտոս, Իրաք, Սիրիա, Լիբանան և այլն) «անկախ» կառավարություններ ստեղծելու մեջ։

Սակայն այդ միջոցառումները ուժեղացրին միայն ժողովրդական շարժումները գաղութարարների դեմ։ Իմպերիալիստների համատեղ ջանքերը գաղութային սիստեմի պահպանման համար գաղութային ժողովուրդներին միավորեցին ընդհանուր թշնամու դեմ։ Ինչպես նշում է Լենինը, մանդատային սիստեմը փաստորեն հանգեցրեց որոշ երկրների գրավմանը «Ազգերի լիգայի» կողմից, որի հետևանքով ստեղծվեց հետևյալ պատկերը. «Միասնական ճնշողը։ Պայքարի կենտրոնացում։ Էտապների բազմազանություն»[21]։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, սոցիալիստական լագերի ստեղծման հետևանքով առաջացած կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում, արդեն անհնար եղավ կասեցնել գաղութային սիստեմի փլուզումը։ Կարճ ժամանակամիջոցում մոտ երեք տասնյակ երկրներ ազատագրվեցին դարավոր, ծանր ու արյունոտ գաղութային լծից։

Ազատագրման այդ պրոցեսը ընթացավ չափազանց անհավասարաչափ և հաստատեց լենինյան այն միտքը, «որ հետագա ռևոլյուցիաները բնակչությամբ անչափ ավելի հարուստ և սոցիալական պայմանների զանազանակերպությամբ անչափ ավելի աշքի ընկնող Արևելյան երկրներում... մատուցելու են, անկասկած ավելի շատ յուրատեսակություն, քան ռուսական ռևոլյուցիան»[22]։

Ներքին պայմանների (բանվոր դասակարգի և նրա պարտիայի առկայությունը, դեմոկրատական ուժերի կազմակերպվածությունը և նրանց հարաբերակցությունը իմպերիալիստական, ֆեոդալական և ռեակցիոն տարրերի հետ և այլն) յուրահատկությունների, արտաքին բարենպաստ պայմանների հետևանքը եղավ ազատագրական պայքարի և նրա արդյունքների անհավասարաչափությունը։ Այն արտահայտվեց մի շարք երկրների՝ Չինաստանի, Վյետնամի և Հյուսիսային Կորեայի, որտեղ ստեղծվեցին ժողովրդա-դեմոկրատական կար-

---

[20] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 96։
[21] Նույն տեղում, հատ. 30, էջ 109։
[22] Նույն տեղում, հատ. 33 էջ 571։

դեր և սկսվեց սոցիալիզմի շինարարությունը, թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական լրիվ անկախության հաստատմամբ։

Մյուս կողմից բավական մեծ թվով երկրներ, ինչպես Հնդկաստանը, Ինդոնեզիան, Բիրման, Կամբոջան, Ցեյլոնը, Արաբական Արևելքի և Աֆրիկայի մի շարք երկրներ նվաճեցին իրենց քաղաքական անկախությունը, սակայն չկարողացան ազատվել մոնոպոլիստական կապիտալի ճիրաններից և մնացին կապիտալիստական սիստեմի մեջ, իմպերիալիստական երկրներից որոշ տնտեսական կախման մեջ։

Վերջապես երկրների մի երրորդ խումբ (մեծ մասամբ Աֆրիկայի մայր ցամաքում) դեռ շարունակում է պայքարը իր ազատագրման համար։

Բուրժուադեմոկրատական ռևոլյուցիայի վերաճումը սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիզմի հաղթանակը Ասիայի որոշ երկրներում հնարավոր դարձավ, որովհետև առկա էին այնպիսի հուժկու գործոններ, ինչպիսիք են համաշխարհային սոցիալիստական սիստեմը ՍՍՌՄ-ի գլխավորությամբ և ազգային ազատագրական վիթխարի շարժումը Արևելքում։ Եվ եթե իմպերիալիստական 14 պետություններ քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանում ինտերվենցիա սկսեցին առաջին սոցիալիստական պետության՝ Սովետական Ռուսաստանի դեմ, ներկա պայմաններում նրանք այլևս ի վիճակի չեղան նորից փորձելու խեղդել ժողովրդական ռևոլյուցիան և կասեցնել սոցիալիզմի շինարարությունը ժողովրդական դեմոկրատիայի երկրներում։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ ռևոլյուցիայի հաղթանակը Արևելքի երկրներում և մանավանդ Չինաստանում, ունեցան իրենց հերթին հսկայական ազդեցություն ամբողջ Արևելքի ժողովրդական շարժումների հաղթանակի գործում։

Մարքսիզմի կլասիկները չափազանց մեծ նշանակություն են տվել Չինաստանի դերին Արևելքի ազատագրման գործում։ Ավելի քան մեկ դար առաջ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը կանխատեսել են հին Չինաստանի կործանումը և նորի ստեղծումը, այն համարելով խթան ամբողջ Ասիայի ազատագրման համար։ «Կանցնեն տարիներ,— գրել է Էնգելսը 1857 թվականին,— և մենք վկա կլինենք աշխարհի ամենահին կայսրության մահվան օրհասին և միաժամանակ համայն Ասիայի նոր դարաշրջանի արշալույսին»[23]։

Չինական մեծ ժողովրդին և նրա պայքարին Վ. Ի. Լենինը նվիրել է մի շարք աշխատություններ, ինչպես օրինակ՝ «Չինական պատերազմը», «Դյուրավառ նյութը միջազգային քաղաքականության մեջ», «Դեմոկրատիան և նարոդնիկությունը Չինաստանում», «Նորոգված Չինաստան», «Չինական ռեսպուբլիկայի խոշոր հաջողությունը», «Լավ է քիչ, բայց լավ» և ուրիշ երկեր, մի շարք զեկուցումներ, ելույթներ և այլն։ Լենինը հետևողականորեն զարգացրել է մարքսիզմի հիմնադիրների այն միտքը, որ չինական ժողովրդի պայքարը բախտորոշ նշանակություն կունենա համաշխարհային ռևոլյուցիոն շարժման համար։

1912 թվականի հունվարին ՌՍԴԲՊ Պրագայի կոնֆերանսը ընդունեց Վ. Ի. Լենինի գրած բանաձևը Չինաստանի մասին, որի մեջ արձանագրվում է, «չին ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի նշանակությունը, պայքար, որը ազա-

---

[23] К. Маркс, и Ф. Энгельс, Соч., т. 12, изд. II, М. Госполитиздат, 1958, стр. 224.

տագրում է ամբողջ Ասիային և խարխլում է Եվրոպական բուրժուազիայի տիրապետությունը»[24]։

Այժմ, երբ Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան ի մի է բերել իր գոյության տասը տարվա արդյունքները, Լենինի այդ միտքը մարմնավորվել է կոնկրետ հաջողությունների մեջ, Արևելքի մյուս երկրներին ցույց տալով զարգացման ճիշտ ճանապարհը։

Նույնպիսի հաջողությամբ սոցիալիզմ են կառուցում Կորեական Ժողովրդա-դեմոկրատական, Վյետնամի և Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկաները։ Վերջինիս տնտեսությունը, որի հիմքը կազմում էր անասնաբուծությունը, ապրում է սոցիալիստական բարեփոխումների բուռն շրջան։ Հաջողությամբ վերջացել է անհատական տնտեսության կոոպերացումը, հիմնադրվել է և գարգանում է արդյունաբերությունը։ Այս բոլորի շնորհիվ Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկան անասնապահական երկրից դարձավ ագրարային-ինդուստրիալ երկիր։

Սոցիալիզմի շինարարության մեջ «մոնղոլական ժողովրդի փառավոր հաջողությունները,—նշում է ընկ. Ցեցենբալը,—հանդիսանում են մեծ Վ. Ի. Լենինի՝ առաջավոր սոցիալիստական պետությունների օգնությամբ նախկինում հետամնաց երկրների ոչ կապիտալիստական ուղիով զարգանալու մասին ուսմունքի ճշմարտության և կենսունակության ակնառու հաստատումը»[25]։

Ավելի բարդ և դժվարին պայմաններում են զարգանում ազատագրված, բայց կապիտալիստական սիստեմում մնացած Արևելքի երկրները։

Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Արաբական Արևելքում և այլ ազատագրված երկրներում տնտեսությունը, ինչպես նշվեց, գտնվում է դեռևս մոնոպոլիստական կապիտալի ազդեցության ներքո։ Որպեսզի ապահովվի պետական ղեկավարությունը տնտեսության նկատմամբ և նրա հնարավորին չափ արագ զարգացումը, հիշյալ երկրների կառավարությունները օգտագործում են պետական կապիտալիզմի ուղին։

Միանգամայն իրավացի են Ներուն և Սուկառնոն, երբ նրանք ընդգծում են, թե տնտեսական ազատագրման համար մղվող պայքարը կրում է ավելի սուր բնույթ, քան պայքարը քաղաքական անկախության համար։

Տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման հաջողությունները այստեղ կախված են ազգային ուժերի համախմբվածությունից, բանվոր դասակարգի կազմակերպություններից և ազգային բուրժուազիայի ու նրա կառավարությունների դեմոկրատական ճիշտ քաղաքականությունից։

Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է Արևելքի ազգային բուրժուազիայի դեմոկրատական տենդենցների և բուրժուական նացիոնալիզմի պատմականորեն արդարացի լինելու մասին։

«Ասիայում,—գրում է նա,—կա դեռևս բուրժուազիա, որն ընդունակ է ներկայացնելու անկեղծ, մարտական հետևողական դեմոկրատիա, որն արժանավոր ընկերն է Ֆրանսիայի XVIII դարի վերջի մեծ քարոզիչների և մեծ գործիչների»[26]։

Մարքսիստական այս տեսակետը լիովին արդարացվել է Արևելքի ազգա-

---

[24] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 599։

[25] „Правда", 19 февраля 1960.

[26] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 199։

յին-ազատագրական շարժումների և առանձին ժողովուրդների անկախության համար մղած պայքարի բազմամյա փորձով։

Պատմական կոնկրետ այս երևույթի ճիշտ ըմբռնումը մեծ նշանակություն ունի պրոլետարիատի և նրա պարտիայի ստրատեգիական և տակտիկական գծի որոշման համար։

Արևելյան երկրների ազգային բուրժուազիայի դեմոկրատիզմի դասակարգային հիմքը Լենինը համարում է գյուղացիությունը, որը, ինչպես հայտնի է, կազմում է տվյալ երկրների ազգաբնակչության մեծագույն մասը։ Այս պատճառով Լենինի հիմնական պահանջներից մեկն էլ այն է, որ բանվոր դասակարգը և նրա պարտիաները այս երկրներում կարողանան հետևողական պայքար տանել գյուղացիության արմատական շահերի պաշտպանման համար։ Հիմնականը այս հարցում՝ առանց զիջումներ կատարելու ֆեոդալական տարրերի օգտին, հողային ռեֆորմի իրականացումն է։

Իսկ այնքան, որքան ազգային բուրժուազիայի շահերը բախվում են և՛ իմպերիալիզմի, և՛ ֆեոդալիզմի շահերի հետ, նա հաճախ պաշտպանում է հողային ռեֆորմը, ցանկանալով զրկել թե իր երկրի և թե օտար հողատերերին նրանց տնտեսական հիմքերից։

Հողային և հետևողական դեմոկրատական այլ ռեֆորմների կենսագործումը կյանքում կարող են ստեղծել պայմաններ, երբ բանվոր դասակարգի և նրա պարտիայի ղեկավարությամբ, հենվելով բանվորների և գյուղացիների ամուր դաշինքի վրա, հնարավոր կլինի կազմակերպել ազգային ճակատ՝ ազգային բուրժուազիայի մասնակցությամբ։

Վերջինս դեմոկրատական քաղաքականություն է տանում բոլոր այն դեպքերում և երկրներում, որտեղ երկրի հիմնական դասակարգերի՝ բանվորների և գյուղացիների կազմակերպվածությունն ու ակտիվությունը, Կոմունիստական պարտիաների հեղինակությունը ապահովում են մշտական կոնտրոլը ներքևից և թույլ չեն տալիս այն տատանումներն ու շեղումները, որոնց ընդունակ է բուրժուազիան։

Իրաքում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում և այլ երկրներում, որտեղ ազգային բուրժուազիան թե ներքին և թե արտաքին քաղաքականության շատ հարցերում հանդես է գալիս որպես առաջավոր, դեմոկրատական ուժ, այնտեղ նրա բոլոր պրոգրեսիվ միջոցառումները գտնում են լայն մասսաների ընդունելությունը, իսկ կոմունիստական և բանվորական պարտիաները օգնում են համապատասխան կառավարություններին կիրառելու այդ միջոցառումները։

Այդպիսի երկրներում աշխատանք է տարվում ազգային բուրժուազիայի այն լիդերներին պահպանելու համար, որոնք պատմական խոշոր գործ են կատարում իմպերիալիզմի ու ֆեոդալիզմի դեմ, իրենց երկրի անկախությունը ամրապնդելու համար մղած պայքարում։

Թե որքան ճիշտ է պրոլետարական պարտիաների և նրանց լիդերների դիրքը այս հարցում, ցույց են տալիս Լենինի հետևյալ տողերը։

«Չի կարելի մարքսիստ լինել, չտածելով ամենախոր հարգանք դեպի բուրժուական մեծ ռևոլյուցիոներները, որոնք համաշխարհային պատմական իրավունք են ունեցել խոսելու բուրժուական «հայրենիքների» անունից, որոնք ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի մեջ քաղաքակիրթ կյանքի են բարձրացրել տասնյակ միլիոնավոր նոր ազգեր»[27]։

[27] Նույն տեղում, հատ. 21, էջ 273։

Մեր կարծիքով ներկա պատմական ժամանակաշրջանում այդ կարգի մարդկանց թվին կարելի է դասել Ֆիդել Կաստրոյին, Աբդուլ Քերիմ Կասեմին, Սուկառնոին, Ռի-Նուին, Ջ. Ներուին և ազգային բուրժուազիայի նման տիպի այլ գործիչների։

Բայց բուրժուազիան շատ հաճախ ցուցաբերում է անհետևողականություն։ Դրա պատճառը, ինչպես նշում է Լենինը, այն է, որ շահագործվող երկրների բուրժուազիան մեծ մասամբ, ազգային շարժմանը օգնելու հետ միասին, համաձայնության է գալիս իմպերիալիստական երկրների բուրժուազիայի հետ և միասին ելնում են կռվի բոլոր տեսակի ռևոլյուցիոն շարժումների և ռևոլյուցիոն դասակարգերի դեմ։ Թուրքիայի, Պակիստանի և մի շարք այլ երկրների տիրող շրջանների հակաժողովրդական քաղաքականությունը, Հնդկաստանում, Արաբական Միացյալ Ռեսպուբլիկայում և այլուր տեղի ունեցած որոշ դեպքեր հաստատում են պատմական այս ճշմարտությունը։

Ազգային բուրժուազիայի տատանումները առանձնապես ակնառու են այնպիսի կարևոր հարցերում, ինչպիսիք են ագրարային ռեֆորմը, դեմոկրատական ազատությունների կենսագործումը և միջազգային քաղաքականության ճիշտ դիրքավորումը։

Պետք է ասել նաև այն, որ ինչքան թուլանում են իմպերիալիզմի դիրքերը Արևելքում, այնքան ավելի բազմազան են դառնում այն միջոցառումները, որոնք անց են կացվում իմպերիալիստական պետությունների կողմից։ Իմպերիալիստական այսպիսի քաղաքականության դրսևորումներից են ՆԱՏՕ, ՍԵՆՏՕ և ՍԵԱՏՕ (իմպերիալիստական այս խմբավորումների երեքից երկուսը Ասիայում են գտնվում), ռազմական բլոկների կազմակերպումը և գործունեությունը, ասիական որոշ երկրների ներգրավումը ՆԱՏՕ-ի մեջ, զանազան երկրների հետ կնքած (Յապոնիա, Թուրքիա, Իրան, Պակիստան) միակողմանի ռազմական համաձայնագրերը, այսպես կոչված «էյզենհաուերի դոկտրինան» և «օգնությունը» թույլ զարգացած երկրներին և այլն։

Իմպերիալիստները երբեմն չբավարարվելով հիշյալ միջոցառումներով, փորձում են ամրապնդել իրենց վիճակը զենքի ուժով։ Այդպիսին էին՝ Անգլո-ֆրանկո-իսրաելյան ագրեսիան Եգիպտոսի դեմ 1956 թվականին, Լիբանանի և Հորդանանի օկուպացիան Միացյալ Նահանգների և Անգլիայի կողմից 1958 թվականին, Ֆրանսիայի քաղաքականությունը Ալժիրի նկատմամբ և այլն։

Բայց ժամանակները ուրիշ են, և դրա համար մեծ մասամբ իմպերիալիստների քաղաքականությունը Արևելքում ձախողվում է։

Ազատագրված ժողովուրդները, որոնք պայքարում են իրենց անկախության ամրապնդման համար, սեփական փորձով գիտեն, թե ո՞վ է իրենց բարեկամը և ո՞վ թշնամին։ Նրանք անշահախնդիր օգնության մեծ անհրաժեշտություն են զգում իրենց տնտեսության, կուլտուրայի, գիտության զարգացման ասպարեզում։

Իրագործելով Վ. Ի. Լենինի պատգամները, նրանց այդպիսի օգնություն են ցույց տալիս Սովետական Միությունը և մյուս սոցիալիստական երկրները, ներառյալ ժողովուրդական Չինաստանը։ Այդ օգնությունը տարբերվում է իմպերիալիստների ցույց տված «օգնությունից» նախ նրանով, որ այն չի պայմանավորվում որևէ քաղաքական պահանջով և ապա տրվում է շափազանց արտոնյալ պայմաններով ու այնպիսի ապրանքներով (մեքենաներ, սարքավորում-

ներ), որոնք անհրաժեշտ են ստեղծելու սեփական արդյունաբերություն և ապահովելու երկրի տնտեսական անկախությունը։

Բազմապիսի է Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների օգնությունը, որը հզոր երաշխիք է հանդիսանում գաղութատիրությունը վերականգնելու բոլոր փորձերի դեմ։

«Պատմաբանները, ուսումնասիրելով մարդկային հասարակարգի զարգացումը,— ասում է Ն. Ս. Խրուշչովը,— բոլոր հիմքերը կունենան XX դարի կեսերն անվանելու նոր աշխարհի, ազատության ու անկախության աշխարհի կառուցման ժամանակաշրջան։

Մարդկության շատ խայտառակ երևույթի՝ գաղութատիրության կործանում՝ ահա ժամանակի հատկանիշներից մեկը»[28]։

Այս մեծ պատմական խնդրի իրագործման և Արևելքի երկրների տնտեսության զարգացման անհրաժեշտ պայմանն է խաղաղության ամրապնդումը ամբողջ աշխարհում։ Այստեղ ևս նրանց օգնության է գալիս Սովետական Միությունը և ամբողջ սոցիալիստական լագերի լենինյան խաղաղ քաղաքականությունը, որը պաշտպանություն է գտնում Արևելքի անկախ պետություններից շատերի կողմից։

Վ. Ի. Լենինի հիմնական պատգամներից մեկն էլ հետևողական պայքարն է խաղաղության և խաղաղ գոյակցության համար։ Ամերիկյան երեկոյան թերթերից մեկի թղթակցի հարցին, թե ինչպիսի պլաններ ունի Սովետական կառավարությունը Ասիայում, Վ. Ի. Լենինը 1920 թվականի փետրվարին պատասխանում է այսպես.

«Նույնն են, ինչ որ Եվրոպայում. այն է՝ խաղաղ համակեցություն բոլոր ազգերի, ժողովուրդների, բանվորների և գյուղացիների հետ, որոնք արթնանում են նոր կյանքի՝ առանց շահագործման, առանց կալվածատերերի, առանց կապիտալիստների, առանց վաճառականների կյանքի համար։ 1914—1918 թթ. իմպերիալիստական պատերազմը... արթնացրեց Ասիան և ուժեղացրեց այնտեղ, ինչպես նաև ամենուրեք, ազատության, խաղաղ աշխատանքի, այլևս պատերազմներ թույլ չտալու ձգտումը»[29]։

Վ. Ի. Լենինի ուսմունքը ազգային և գաղութային հարցերում հիմք ծառայեց Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ազգային քաղաքականությանը։ Նա ցույց տվեց, թե ինչպես պետք է զարգանա ազգային ազատագրական շարժումը գաղութային և կախյալ երկրներում, որ այդ շարժումը կազմելու է միջազգային պրոլետարիատի ռևոլյուցիայի անբաժանելի մասը, որ այդ երկու ռևոլյուցիոն ուժերը՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ, ապահովելու են իմպերիալիզմի կործանումը և սոցիալիզմի հաղթանակը համայն աշխարհում։

---

[28] Սովետական Հայաստան, 28 փետրվարի, 1960։

[29] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 464։